

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել եւ գործս ոչ ունիցի. միթէ կարիցե՞ն հաւատքն ապրեցուցանել զնա» (Հակոբոս Բ 14) բնաբանով:

* * *

Հուլիսի 9-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ ժամանեց ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի պատվիրակությունը՝ ներկայացուցիչների պալատում դեմոկրատների ղեկավարների տեղակալ Թոմաս Ս. Ֆոլիի գլխավորությամբ:

Վեհարանում, հանդիսությունների դահլիճում, հյուրերին ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը և համառոտ տեղեկություններ հաղորդեց նրանց Հայ Եկեղեցու պատմության և նրա այսօրվա կյանքի մասին:

Այնուհետև հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի թանգարաններում ցուցադրվող եկեղեցական նմուշներին:

Վերջում հյուրերը շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ խնդրելով իրենց հարգալից զգացումները փոխանցել Ամենայն Հայոց Հայրապետին:

* * *

Հուլիսի 10-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, օրվա մեծ տոնի առթիվ, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսում «Կատարումն օրինաց եւ մարգարէից՝ դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր» (պատարագամատույց) բնաբանով:

* * *

Հուլիսի 11-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը: «Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Հուլիսի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

*
* *

Հուլիսի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ և տպավորիչ քարոզ է խոսում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը՝ «Բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա» (Ղուկ. Է 28) բնաբանով:

*
* *

Հուլիսի 18-ին, երկուշաբթի.—Այսօր Տ. Շահե արքեպ. Աճեմյանը մեկնում է Վանկուվեր (Կանադա)՝ մասնակցելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վեցերորդ հանդիպմանը:

*
* *

Հուլիսի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

*
* *

Հուլիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Տ. Ներսես քհն. Ներսեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի դուք երթայցէք եւ պտղաբերք լինիցիք եւ պտուղն ձեր կացցէ» (Հովհ. ԺԵ 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 25-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռում գտնվող Տ. Ներսես քհն. Ներսեսյանը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից մեկնում է Լոնդոն՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Հուլիսի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստ:

*
* *

Հուլիսի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Զաքայանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: